Ս. Աստուածածնայ ամայի վանք ի Մէյսարի գեղջ։	
Ութն քարաշէն կիսաւեր սենեակք առ դրանն վանիցն։ Տասն և իննը կտոր վարելահողք, և խոտատեղիք, որք գտանին ի Մէյսարի խաւն ընդ հողոյ գիւղացւոց, ընդ որս և ամայի այգեատեղին, տարածութիւն ամենիցն է 36 դէս. և 1261 քառ. սաժ.	Այգեատեղին և վարելահողքն տուեալ են կապալաւ ի տարին 100 ռուբլի, որև ստանայ հոգաբարձութիւն եկեղեցական դպրոցին Շամախւոյ, յօգուտ այնր դպրոցին, ըստ տնօրէնութեան Հոգևոր իշխանութեան։

Ի դարաւոր ժամանակաց հետէ գտանին յիշեալ կալուածքն երկուց վանօրէից յանվէճ տիրապետութեան և զկնի մտանելոյն կողմանցս 'ի Հպատակութեան Ռուսիոյ ըստ տնօրէնութեան նահանգական կառավարութիւն կազմեալ են վասն իրաւանց տիրապետութեան նոցին առանձին առանձին մակարդակը (պլանք) իսկ 'ի ժամանակս ընդհանուր երկրաչափութեան յայս կոյս կովկասեան սահմանի, իբրև անվիճելի սեպհականութիւն, վերստին հաստատեալ են այնոքիկ կալուածք 'ի վերայ նոյն վանօրէից։

անքի փոքրիկ անտառի մէջ՝ մի բարձրահայեաց վայելուչ տեղ՝ վանքից վերև և մօտ՝ է «նահատակ» անունով ուխտատեղին, ուր կայ մի խաչ քար՝ որոյ վերայ գրուած է՝

«Յիշատակ է Աստուածատուր վարդապետին տուրբ Խաչս թուին ՌՃԿԴ.» (1715)։

Որոյ անուամբ արձանագիր կայ և վանքի սրբատաշ քարով շինած շտեմարանի դրան ճակատին նոյն թուին ՌՃԿԴ (1715)։

Եւ բնակչաց ըստ աւանդութեան ասելով՝ այս Աստուածատուր վարդապետը նուիրակութիւնից վերադարձի միջոցին՝ թուքրերը իմանալով՝ ճանապարհը կտրում և հազիւ թէ Աղստու գետը հասած՝ գետի միջին սպանում և ժողոված դրամներն առնում ու փախչում, որ ապա վանքի միաբաններն իմանալով՝ գնում են և հանդիսով բերում և իբրև վանքի